

Ո՛հ Վարդանայ յիշատակն մէ մեռանի,
Դափնեաց անմահ զըլուխն ալ է արժանի .
Գործք իւր իրեն մարթիկ կանգնել մահարձան,
Թէ ապերախտ աշակերտք իւր զըլանան:

Թէ աշուճութեան, միանգամայն իւր ազգին,
Հաւատարիմ, ձօնեց զգրիչ իւր անգին .
Երախտապարտ թշուառացեալն Հայաստան,
Ողբալով միշտ, յիշեացէ քեզ ս՛կ Վարդան:

31 Մարտ 1879.

ՍԵՊՈՒՃ ՄԻՆԱՍԵԱՆ

ԵՂԵՐԳ Ի ՄԱՀ

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԳԱՆ ՊԵՅԻ

Թըշուառ պանդուխտ որ 'ի քընար յոգնա-
տըխուր լալագին
Ընդ հովանեաւ ծառոյդ նըտեալ զ՞ երգես դու
'ի չիբին:

Թէ գոյժ դու տառ չարաբաստիկ ազգիդ Հայոց
բոթաբեր,
Աղէ՛ առա թէ զի՛նչ նոր վերս յաւել վերացս
երկնից Տէր:

Ձանազորոյն ճառակազիր լալ ես պարտիմ Հայ-
կազանց

Ըղբերեալ ազգ ողբալ է անկ . ընդ առեակօք
սեւազգեաց,

Մինչ խընդայ Յոյն, խընդայ Ըսլավ, խընդայ
եւ ազգ խուժողուն:

Հիքացելոցս լալ է բաժին, մեզ բուռանի տա-
տասկ փուշ:

Ընդ թարմ հողով որ սառ հանգչի ըզմեծ Վար-
դան ես ողբամ

Որ իւր մահուամբ եթող ըզմեզ ըզպանդուխտըս
անխընամ:

Սուգ առին Հայք սեւ տմպ պտտեաց մեր զԱշ-
խարհին հորեղան:

Լացին բընկէք, լացին օտարք ըզհայազգի մեր
Տանդուն:

Որ երբեմն Վասպուրական մահահամբոյր է
զաշուն

Մեծահըռչակ Մամիկոնեան կացեալ պաշտպան
աշխարհին:

Արեաբար պատերազմեալ ընդ վառ Պարսիկ
մուկերն,

Անկառ անշունչ գետնաթաւալ է փըրկութիւն
բւր տահմին:

Անուանակից անմահ Քաջին և Դիւցադին բախ-
տակից,

Վեհ քան ընեա ի զըրական ի յասպարէզ ճըռ-
նակից:

Մինչ յետին շունչ զո՛նեաց Ազգիս զաշխա-
տութիւն անխընայ,

Անմահ կացոյց զիւր անուռ քան զանտիական
Պարբա:

Իմաստասերդ քան ըզՄուղոն, զօրէնըսդին Ա-
թենեան,

Ջինչ փոյթ է քեզ թէ Հայկազունք ըզմահար-
ձանդ զըլանան:

Թառամեցան աշխարհակուլ ինքնակալաց դափ-
նեայ պսակք:

Մարմարալէն զարձան քաջաց քակտեալ տա-
րաւ ժամանակ:

Ձ'են մահարձանք շքեղակերպ, երկնաօըլաց
ոչ նոճիք:

Որ խօսեցան ընդ երկրագունդս քոյժ անմե-
ռաց երախտիք:

Երախտագէտք կանգնեցան քեզ ի խորս ողբ-
տից մահարձան

Անխախտելի յամենակուլ ժամանակէ յաւի-
տեան:

Ընդ պանդըխտին և ես խառնեմ զիմ արտա-
սուռ թախազին:

Բազմադիմի քոց խընամաց զինչ տըրիտուր
թանկազին

Հատուցանել եղէց կարող քոյժ աշակերտ ա-
նարժան:

Հանապազորդ ընկալ մի չիթ զիմ արտօսըր
մեծք Վարդան:

7 Ապրիլ 1879.

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԳԱՆ

